


**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»  
հիմնադրամի գիտական խորհրդի  
27.06.2022թ. № 11 նիստի որոշմամբ հաստատված՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում  
մասնագիտության կրթական ծրագրի մշակման կամ վերանայման,  
մշտադիտարկման և գնահատման կարգի»  
ԲՊՀ ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

  
Կ. Վ. Հարությունյան



**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Երևան, 2022 թ.

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն ուղեցույցը պարունակում է մեթոդական ցուցումներ՝ ուղղված ավարտական աշխատանքի պատրաստմանը և ղեկավարմանը օժանդակելուն:

### 1. Ավարտական աշխատանքի վերնագիրը.

- պետք է լինի կարճ (չգերազանցի 10 բառը), հստակ ձևակերպված և արտահայտի ուսումնասիրության առարկայի բովանդակությունը,
- չի կարող լինել կրճատումներով, հապավումներով կամ սկզբնատառերով (abbreviations, acronyms and initials):

### 2. Ավարտական աշխատանքի հիմնական կառուցվածքային բաժիններն են.

- 1) տիտղոսաթերթ,
- 2) բովանդակություն,
- 3) ներածություն,
- 4) հիմնական կառուցամաս՝ կազմված գլուխներից և ենթագլուխներից,
- 5) եզրակացություն,
- 6) գրականության ցանկ,
- 7) հավելվածներ՝ ըստ անհրաժեշտության:

### 3. Տիտղոսաթերթը ավարտական աշխատանքի առաջին էջն է, որը լրացվում է՝ ըստ սույն ուղեցույցի Հավելված 1.1- ում բերված ձևաչափի:

### 4. Բովանդակության մեջ հաջորդական համարակալմամբ նշվում են աշխատանքի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները:

### 5. Բովանդակության առաջին բաժինը Ներածությունն է, որից հետո թվարկվում են գլուխները և ենթագլուխները, Եզրակացությունը, Գրականության ցանկը, Հավելվածները: Բովանդակությունը կազմվում է ըստ Ուղեցույցի Հավելված 1.2 - ում բերված ձևաչափի:

### 6. Ներածության մեջ՝

- 1) ներկայացվում և հիմնավորվում է ուսումնասիրության ընտրված **թեմայի արդիականությունը**,
- 2) հիմնավոր կերպով ներկայացվում է **ուսումնասիրության առարկան**,
- 3) առանձին պարբերությամբ հստակ շարադրվում են ուսումնասիրության **նպատակը և խնդիրները** (goal and objectives),
- 4) նկարագրվում է ուսումնասիրության **մեթոդաբանությունը**, հիմնավորվում է ուսումնասիրության իրականացման համար ընտրված **մեթոդ(ներ)ի** կիրառման նպատակահարմարությունը,
- 5) նկարագրվում են ուսումնասիրության ակնկալվող **արդյունքները** և դրանց տեսական և գործնական կարևորությունը,
- 6) տրվում է յուրաքանչյուր **գլխի և ենթագլխի հակիրճ նկարագրությունը**,

### **Ներածությունը չպետք է գերազանցի 3-4 էջը:**

7. Ներածության մեջ ներկայացվող **ուսումնասիրության** խնդիրները պետք է բխեն նպատակից և սահմանեն դրան հասնելու ուղիները, մատնանշեն ուսումնասիրության առանցքային հարցադրումները և դրանց լուծումների հնարավորությունները: Ուսումնասիրության խնդիրները պետք է ձևակերպվեն ճշգրիտ և հստակ, լինեն իրատեսական ու իրագործելի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ուսումնասիրությունը չի կարող համարվել ավարտուն, եթե առաջադրված նպատակը և խնդիրները չեն իրագործվել:
8. Ներածության մեջ ներկայացված **ուսումնասիրության մեթոդաբանությունը** պետք է ներառի նաև ընտրված հետազոտական մեթոդ(ներ)ի նկարագրությունը և տեսական հիմքերը, ինչպես նաև կարող է պարունակել ընդունված հայտնի, մեթոդ(ներ)ի կիրառման սեփական մոտեցումներ: Եթե օգտագործվել են սեփական մոտեցումներ կամ հայտնի մեթոդ(ներ)ի ձևափոխված տարբերակ, ապա անհրաժեշտ է նկարագրել դրանք: Ուսումնասիրության համակողմանիությունն ու փաստարկվածությունը պայմանավորված են օգտագործված մեթոդաբանությամբ և մեթոդ(ներ)ի ճիշտ ընտրությամբ:
9. Ավարտական աշխատանքի հիմնական **կառուցամասը** բաղկացած է տրամաբանորեն փոխկապակցված գլուխներից և ենթագլուխներից, որոնցում մանրամասնորեն վերլուծվում են ուսումնասիրության առարկան, հիմնական խնդիրներն ու արդյունքները՝ արտահայտելով ուսումնասիրության մեթոդաբանությունն ու կիրառված մեթոդ(ներ)ը:
10. Ավարտական աշխատանքի հիմնական կառուցամասը պետք է ներառի հետևյալ երկու բովանդակային մասերը՝
  - 1) **տեսական մաս**, որը ենթադրում է՝
    - 1.1) թեմային համապատասխանող մասնագիտական գրականության՝ գիտական հոդվածների և աշխատությունների, ուսումնասիրությունների, զեկույցների և այլ հրապարակումների վերլուծություն և դրանց վերաբերյալ աշխատանքի հեղինակ ուսանողի սեփական, հիմնավորված տեսակետի ներկայացում,
    - 1.2) քննարկվող հասկացությունների, եզրույթների, երևույթների կամ գործընթացների վերաբերյալ տեսական և կիրառական հետազոտությունների ներկայացում (հարկ է խուսափել դասագրքային և ինտերնետային տեքստերից, սահմանումներից, արտահայտություններից, իսկ այլ հեղինակներից օգտվելու դեպքում պատշաճ կերպով տալ հղումներ),
  - 2) **կիրառական-վերլուծական մաս**, որը ենթադրում է՝
    - 2.1) ներածության մեջ առաջադրված նպատակի և խնդիրների ուսումնասիրություն՝ հենվելով տեսական մասում վերլուծված մասնագիտական գրականության վրա, և խնդիրների ու հնարավոր լուծումների ուսումնասիրության արդյունքների վերլուծական ներկայացում,

2.2) հավաքված վիճակագրական ու այլ տվյալների մշակման և վերլուծության արդյունքների շարադրում՝ հնարավորինս կիրառելով դրանց համակարգված և դիտողական ներկայացման գործիքներ (աղյուսակներ, սխեմաներ, դիագրամներ, գծագրեր, նկարներ, գրաֆիկական և այլ պատկերներ),

2.3) ուսումնասիրության արդյունքների շարադրում՝ ըստ կարևորության և տրամաբանական հաջորդականության, և դրանց հիմնավոր մեկնաբանում,

2.4) ուսումնասիրության արդյունքների տեսականորեն և գործնականորեն կիրառելու հնարավորությունների և հեռանկարների ներկայացում,

**11.** Տեսական վերլուծությունների կատարման ընթացքում պետք է առաջնորդվել քննական և ապացուցողական մոտեցումներով:

**12.** Գործնական վերլուծությունների կատարման ընթացքում պետք է առաջնորդվել նաև լայն կիրառություն ունեցող հետազոտական մեթոդներով, օրինակ՝ սոցիոլոգիական հարցումների, վիճակագրական-մաթեմատիկական վերլուծության և այլ մեթոդներով:

### **13. Ուսումնասիրության արդյունքները՝**

1) անհրաժեշտ է նկարագրել՝ մատնանշելով կատարված բացահայտումները և դրանց հիմնավորվածությունը,

2) պետք է լինեն ստույգ, հնարավորինս չափելի և ձևակերպվեն հստակ ու գիտական շարադրանքի լեզվով՝ կիրառելով կրավորական սեռի կառույցներ (օրինակ՝ «ես հայտնաբերեցի», «մենք բացահայտեցինք» ձևակերպումների փոխարեն գերադասելի է կիրառել «ուսումնասիրության արդյունքում պարզվեց, բացահայտվեց, վերհանվեց» և համանման այլ ձևակերպումներ):

### **14. Եզրակացության մեջ՝**

1) ամփոփվում են ուսումնասիրության արդյունքները՝ ավարտական աշխատանքի ներածությունում ամրագրված խնդիրների տրամաբանական հաջորդականությամբ,

2) չեն ընդգրկվում այնպիսի արդյունքներ, որոնք ուսումնասիրության մեջ (գլուխների, ենթագլուխների մեջ) չեն քննարկվել,

3) ներկայացվում են աշխատանքի հեղինակ ուսանողի սեփական եզրակացությունները,

4) քննարկվում են թեմայի շրջանակում ուսումնասիրությունը շարունակելու հնարավորությունները:

**1.** Ավարտական աշխատանքն **ամփոփող եզրակացությունները** պետք է՝

1) շարադրվեն հակիրճ և հստակ՝ խուսափելով ուսումնասիրության նախորդ բաժիններում օգտագործված ձևակերպումների բառացի վերարտադրումից,

2) ներկայացված լինեն կետանիշերով (bullets),

3) **շարադրվեն 3-4 էջի սահմաններում:**

**2.** **Գրականության ցանկում** ներառվում են բոլոր այն գրքերը, հոդվածները, զեկույցները, իրավական ակտերը, հրապարակումները և այլ աղբյուրները,

որոնցից օգտվել է աշխատանքի հեղինակ ուսանողը: Աղբյուրները ներկայացվում են այբբենական կարգով (հետևյալ հաջորդականությամբ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, այլ լեզուներով աղբյուրներ): Վերլուծված ու ավարտական աշխատանքում ներառված աղբյուրների թիվը պետք է կազմի առնվազն 10 աղբյուր և դրանց թվում պետք է լինի վերջին 10 տարում և օտար լեզվով հրատարակված գրականություն:

### 3. Հավելվածներ

- 1) հավելվածների մեջ ներառվում են կատարված աշխատանքին վերաբերող այն նյութերը, որոնք չեն ընդգրկվել հիմնական մասում, սակայն դրանց առկայությունը հարստացում է աշխատանքը և դյուրացնում դրա ընկալումն ու գնահատումը. օրինակ՝ հավելվածով կարող են ներկայացվել հապավումների ցանկը, օգտագործված եզրույթների բացատրական բառարանը, ինչպես նաև ծավալուն աղյուսակները, գծագրերը, նկարները, գրաֆիկական և այլ պատկերները, որոնց վերևում տրվում են դրանց վերնագրերը, իսկ ներքևում՝ բացատրությունները կամ մեկնաբանությունները,
- 2) ավարտական աշխատանքի հիմնական մասի տեքստում տրվում են հղումներ համապատասխան հավելվածներին, մասնավորապես՝ տեքստի անհրաժեշտ մասում փակագծերում գրվում է «Հավելված» բառը, որին հաջորդում է դրա հերթական համարն արտահայտող թիվը, օրինակ՝ (Հավելված 1): Եթե աշխատանքում կա ընդամենը մեկ հավելված, այն նույնպես համարակալվում է և նշվում է որպես (Հավելված 1):

### 4. Ավարտական աշխատանքի ձևավորման պահանջներն են՝

- 1) **տեքստի շարադրանքը՝** տպագիր,
- 2) **ավարտական աշխատանքի ծավալը՝** 30-40 էջի սահմանում՝ առանց հավելվածների, (ավարտական աշխատանքի օտար լեզվով սեղմագրի ծավալը՝ 8-10 էջի սահմանում),
- 3) **ավարտական աշխատանքի և գլուխների վերնագրերը՝** մեծատառերով, տառաչափը՝ 14, թավ (bold), իսկ **ենթագլուխների վերնագրերը և ենթավերնագրերը՝** բառերի միայն ռաջին տառերը մեծատառերով, տառաչափը՝ 12, թավ (bold),
- 4) **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ», «ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ», «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ», «ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ» վերնագրերը՝** մեծատառերով, տառաչափը՝ 14, թավ (bold),
- 5) **տառային ձևաչափը՝** Unicode, **հայերեն շարադրանքի տառատեսակը՝** GHEA Grapalat, **օտար լեզվով շարադրանքի տառատեսակը՝** Times New Roman,
- 6) **շարադրանքի տառաչափը՝** 12,
- 7) **տողերի միջև հեռավորությունը՝** 1.5,

- 8) **էջի լուսանցքները** - աջ կողմից՝ 10 մմ, ձախ կողմից՝ 25 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ,
- 9) **էջերի համարակալումը**՝ ներքևում աջից, սկսելով բովանդակության էջից:
- 10) **ավարտական աշխատանքը տպագրվում է՝** A4 չափի սպիտակ թղթի մեկ կողմի վրա:

5. Ավարտական աշխատանքում օգտագործված **մեջբերումներին և աղբյուրներին հղումներն ու ծանոթագրությունները** նշվում են յուրաքանչյուր էջի ներքևում՝ տողատակով, և ներառում հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը կամ հրապարակած կազմակերպության ամբողջական անվանումը, աշխատության անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, տարեթիվը, էջ(եր)ը: **Համացանցային կայքերի նյութերից մեջբերումներ կամ դրանց հղումներ** կատարելիս հարկավոր է նշել ոչ միայն տվյալ կայքի ամբողջական հասցեն, այլև կայքի այն էջի հասցեն, որից կատարվել է մեջբերումը կամ հղումը, ինչպես նաև կայք մուտքի օրը:

6. **Ծավալուն աղյուսակները** տեղադրվում են ավարտական աշխատանքի հավելվածներում: **Ոչ մեծ աղյուսակները** (1 էջի սահմաններում) տեղադրվում են ավարտական աշխատանքի հիմնական կառուցամասի տեքստում և դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա հերթական համար ու վերնագիր՝ գրված աղյուսակի վերևում:

7. Ավարտական աշխատանքի հիմնական կառուցամասի տեքստում տեղադրված ոչ մեծ (1 էջի սահմաններում) **գծապատկերները (սխեմա, դիագրամ, գծանկար, գրաֆիկ և այլն)** ներկայացվում են առանձին համարակալմամբ և դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա հերթական համար և վերնագիր՝ գրված վերևում:

8. Ավարտական աշխատանքի հիմնական կառուցամասի տեքստում տեղադրված ոչ մեծ (1 էջի սահմաններում) **նկարները (պատկերները)** ներկայացվում են առանձին համարակալմամբ, և դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա հերթական համար և վերնագիր՝ գրված վերևում:

9. **Գրականության ցանկը** կազմվում է հետևյալ պահանջներին համապատասխան՝

- 1) սկզբում գրվում են **իրավական ակտերը**՝ ըստ տեքստում օգտագործման հերթականության՝ նշելով իրավական ակտի լրիվ անվանումը, հոդվածը, մասը, կետը, ընդունման ամսաթիվը (տարեթիվը, ամիսը, օրը), ընդունող մարմինը, վերջում՝ հղումը (եթե առկա է): Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին, հղում՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>,

- 2) իրավական ակտերից հետո ներկայացվում է **հայերեն մասնագիտական գրականությունը**՝ ըստ հեղինակ(ներ)ի ազգանվան այբբենական հերթականության՝

- **մենագրությունների համար** նշվում է հեղինակի ազգանունը, անվան

առաջին տառը, աշխատության լրիվ անվանումը (շեղատառերով՝ *Italic*), հրատարակչությունը, հրատարակման վայրը, տարեթիվը, էջերի ընդհանուր քանակը:

Օրինակ՝

Մենագրություններ

1. Պետրոսյան Հ., *Կոմպերենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը*, Հեղինակային հրատարակություն, Երևան, 2013, 264 էջ:
2. Георге И. В, *Формирование профессиональных компетенций студентов образовательных организаций высшего образования на основе организации самостоятельной работы*, ТИУ, Тюмень, 2016, 143 стр.
3. Dearnorff, D., *The SAGE Handbook of Intercultural Competence*, Thousand Oaks, CA, 2009, 542 p.

• **Գիտական հոդվածների համար** նշվում է հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը, հոդվածի վերնագիրը (շեղատառերով, *Italic*), բաժանիչ նշան՝ «//», ամսագրի (պարբերականի, ժողովածուի) վերնագիրը, հատորը, համարը, տարեթիվը և հոդվածի էջերը:

Օրինակ՝

Գիտական հոդվածներ

1. Միլիտոսյան Լ., *Մասնագիտության վերլուծության և քարտեզագրման դերը մասնագիտական կարողունակությունների ձևակերպման գործընթացում* // Բանբեր համալսարանի, հ. 2, 2017, 192-199 էջ:
2. Антипова, В.М., *Диагностическое исследование опыта организации самостоятельной работы студентов в университете* // Самостоятельная работа студентов: поиски, проблемы, решения, № 4, 1991, 20 - 28 стр.
3. Sheffield Morris, A., Silk, J., S., Steinberg, L., Myers, S. S., & Robinson, L. R., *The role of the family context in the development of emotional regulation*. Social Development, № 16 (2), 2007, p. 361-388.

• **Համացանցային/Էլեկտրոնային աղբյուրների համար** նշվում է հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (հեղինակի առկայության դեպքում), աշխատանքի վերնագիրը, էլեկտրոնային հասցեն, մուտքի ամսաթիվը:

Օրինակ՝

Էլեկտրոնային աղբյուրներ

1. Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ, <http://www.anqa.am/>, (25.09.2022).



2. Nodine T., How did we get here? A brief history of competency-based higher education in the United States, <https://onlinelibrary.wiley.com>, (25.09.2022).
- 3) **նույն հեղինակի աշխատանքները** պետք է դասավորել հրապարակման տարեթվի աճման կարգով կամ շարադրանքի մեջ հղումների հերթականությամբ,
- 4) **օտարալեզու գրականության ցանկը** ձևավորվում է նույն ձևաչափով, ինչ հայերեն գրականության ցանկը, բայց բնօրինակի լեզվով,
- 5) վերջում լրացվում են **համացանցային կայքերի հասցեները**:

### **Ավարտական աշխատանքում մեջբերման կամ մտքի վերաշարադրման տեխնիկական ձևավորման և հղում կատարելու ցուցումներ**

1. **Ուղղակի մեջբերումն** այլ՝ արդեն իսկ հրապարակված նյութի տեքստից որևէ հատվածի բառացի վերատադրությունն է ավարտական աշխատանքում:
2. Մեջբերումը պետք է առանձնացվի չակերտներով՝ առանց ոճի, շարահյուսության և իմաստային փոփոխության:
3. Մեջբերումը ցանկալի է լինի ամբողջական: Մեջբերվող տեքստը չի կարող կրճատվել կամայական ձևով:
4. Եթե կատարվում է մեկ ամբողջական նախադասության կամ մի քանի նախադասություն պարունակող պարբերության մեջբերում, ապա չակերտներում մեջբերված նախադասությունների առաջին բառերը գրվում են մեծատառով:
5. Եթե կատարվում է հեղինակի արտահայտած ամբողջական մտքի մի հատվածի մեջբերում, ապա չակերտներում մեջբերվող տեքստից առաջ կամ դրանից հետո դրվում է բազմակետի նշան՝ կախված նրանից, թե տեքստի որ հատվածն է մեջբերվում: Օրինակ՝ «...մեջբերվող տեքստը» կամ «մեջբերվող տեքստը...»:
6. Մեջբերվող տեքստը անհրաժեշտ է գրել շեղատառերով: Մեկից ավել նախադասություն պարունակող տեքստի մեջբերման դեպքում՝ այն անհրաժեշտ է գրել նոր տողից՝ ձախից թողնելով 2 բացատ:
7. Յուրաքանչյուր մեջբերվող տեքստ պետք է ունենա իր հղումը, **որը դրվում է փակող չակերտից անմիջապես հետո** և տրվում է հղումների կատարման և գրականության ցանկի ձևավորման պահանջներով: Հղման մեջ սկզբնաղբյուրի վերաբերյալ տվյալները պետք է ներկայացվեն ամբողջությամբ և ճշգրիտ կերպով:
8. Արգելվում է ուղղակի մեջբերումների մեծ քանակը (մեկ էջում բազմաթիվ պարբերություններ կամ բազմաթիվ էջերում մեծ պարբերություններ): Նման դեպքերում ավարտական աշխատանքը համարվում է ոչ ինքնուրույն կատարված:
9. Մի քանի նախադասություն պարունակող մեջբերումների վերաբերյալ պետք է տալ սեփական վերլուծություն, մեկնաբանություն կամ ամփոփում:

10. **Մտքի վերաշարադրումը** (paraphrase) մեջբերվող հեղինակի արտահայտած մտքի սեփական ձևակերպումով օգտագործումն է՝ ընդհանուր տրամաբանության պահպանմամբ:
11. Մտքի **վերաշարադրման** դեպքում ևս պետք է տրվի հղում համապատասխան աղբյուրին: Հղումը դրվում է վերաշարադրված միտքն արտահայտող պարբերության կամ նախադասության վերջում:

Ավարտական աշխատանքի տիտղոսաթերթի ձևաչափ

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

----- ՖԱԿՈՒԼՏԵՏ  
/անվանումը/

----- ԱՄԲԻՈՆ /ԳՈՒԿ  
/անվանումը/

-----  
**Թեմայով**  
/թեմայի վերնագիր/

**Ավարտական աշխատանք**

«-----» մասնագիտության  
/դասիչ, անվանումը/

«-----» կրթական ծրագիր  
/դասիչ, անվանումը/

----- շնորհվող որակավորում

Ավարտական աշխատանքը երաշխավորվում է հրապարակային պաշտպանության՝  
Ամբիոնի վարիչ/ԳՈՒԿ- ղեկավար՝ -----  
-  
/անուն, ազգանուն. հայրանուն/

Ավարտական աշխատանքը պատրաստ է հրապարակային պաշտպանության՝  
Ղեկավար՝ -----  
/անուն, ազգանուն, հայրանուն/

Հավաստում եմ, որ ավարտական աշխատանքը պատրաստել եմ ինքնուրույն՝  
պահպանելով ակադեմիական բարեվարքության նորմերը:

Ուսանող՝ -----  
/անուն, ազգանուն, հայրանուն/

**Երևան, 20...թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3**

**ԳԼՈՒԽ 1. /Անվանումը/ .....**

1.1. Ենթագլխի անվանումը .....

1.2. Ենթագլխի անվանումը.....

**ԳԼՈՒԽ 2. /Անվանումը/ .....**

2.1. Ենթագլխի անվանումը.....

2.2. Ենթագլխի անվանումը .....

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....**

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....**

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. /Անվանումը/.....**

**ՀԱՎԵԼՎԱԾ 2. /Անվանումը/ .....**

...